



արժեքներուն վրայ, որոնք սիրել եւ պահպանել սորվեցուց մեպի նոյնինքը այսօրուան վտանգուած Մեղգոնեան Կրթական Հաստատութիւնը:

*Իր շնորհակալութիւնները յայտնելէ ետք [Հայկապէան](#) համալսարանի տնօրէնութեան, որ ձրիաբար տրամադրած է սրահը իր բոլոր յարմարութիւններով, Տօթ. Իսկիկեան իր խօսքերը աւարտեց ըսելով.-*

Հաւատացած ենք եւ կը հաւատանք, որ «Միութիւնը զօրութիւն է» եւ միասնաբար վստահաբար կը յաղթահարենք նաեւ այս դառն փորձութիւնը եւ կ'իրականանայ ադա Կարապետ Մեղգոնեանի այս խօսքերը: «Թող որ Մեղգոնեանի այս հաստատութիւնը տեւէ դարձ դար»:

**Եւ Մեղգոնեանը կը մնայ:**

Միասնաբար կառուցենք նաեւ նոր ու փարթամ հայկական վարժարաններ, բայց չքանդենք ու միշտ պահպանենք մեծարժէքը, վսեմը, ասնդականը:

**Պահենք ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ:**